

**< ԱՐԹԻԿԻ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ  
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱ Ն ԿԵՆՏՐՈՆ >  
ՓԲԸ**

**ԵՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**ՆԱԽԱԲԱՆ**

Անվանումը- < Արթիկի մոր և մանկանան առողջության պահպանման կենտրոն > ՓԲԸ

Հասցե, հեռախոս- Շիրակի Մարզ ք. Արթիկ Բաղրամյան 11,

Գործում է 1997թ-ից իրականացնում է Շիրակի մարզի Արթիկ քաղաքի և տարածաշրջանի 23 գյուղերի թվով 18000 իգական սեռի ազգաբնակչության մանկաբարձագինեկոլոգիական հիվանդանոցային և ամբուլատոր բուժօգնությունը, ինչպես նաև մանկական հիվանդանոցային բուժօգնությունը:

Ընկերությունն ունի 3 բաժանմունք՝ 1 արտահիվանդանոցային/կանանց կոնսուլտացիա/, 2

հիվանդանոցային 26 մահճակալով 20 մանկաբարձագինեկոլոգիական 6 մանկական

1. մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունք ,որի կազմի մեջ է մտնում ընդունարան, նախաճնարան, ծնարան, վիրահատարան, մանկանան ինտենսիվ թերապիայի սենյակ:

2. Մանկական բաժանմունք , որի կազմի մեջ մտնում է մեկուսարան, մանիպուլացիոն և հետազոտման սենյակ:

3. Կանանց կոնսուլտացիա, որի կազմի մեջ է մտնում մանիպուլացիոն սենյակ, լաբորատորիայի և էխոսկոպիայի կաբինետները:

Կենտրոնում տարեկան ընդունվում են 500-550 ծննդաբերություն ,120 հղիության ախտաբանություն ունեցող և 40-50 գինեկոլոգիական, 225-235 մանկական հիվանդներ: Կանանց կոնսուլտացիայում իրականացվում է 700 հղիների հսկողություն և 1000 գինեկոլոգիական հիվանդների ամբուլատոր հետազոտում և բուժում:

Կենտրոնի շենքը նորակառույց է 1/մեկ/ հարկանի 980 մ<sup>2</sup> օգտագործվող տարածքով ջրամատակարարումը, ջրահեռացումը, էլեկտրոսնուցումը, կենտրոնացված է շուրջօրյա, ապահովված դիզել գեներատորով և պահուստային ջրի տարրությամբ: Թթվածնի մատակարարումը տեղային կենտրոնացված, ջեռուցումը գազով տեղային:

Կենտրոնի գործիքային և սարքավորումներով հագեցվածությունը բավարար է իր առջև դրվա խնդիրների լուծման համար :

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Ընկերության հիմնական նպատակը մոր և մանկան առողջության պահպանման գործառույթների ապահովում է տարածաշրջանում

ա/ Անվտանգ մայրության շուրջօրյա ռեժիմով ապահովվում

բ/ ցածր և միջին ռիսկի հղիների հսկողություն և բուժում , բարձր ռիսկի հղիների հսկողություն 3-րդ մակարդակի ծննդօգնության օղակների հետ համատեղ

գ/զինեկոլոգիական հիվանդների բուժում

դ/առողջ ապրելակերպի քարոզում , ընտանիքի պլանավորման վերարտադրողական առողջության ծառայությունների մատուցման

ե/ մանկական հիվանդությունների հիվանդանոցային բուժում

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ընկերության գործունեության մեջ զգալի ծավալ կազմող ծառայություններ են

1. արտահիվանդանոցային բուժօգնության տեսակներից

ա/ մանկաբարձական բժշկական օգնություն

բ/ զինեկոլոգիական բժշկական օգնություն

բ/ սոց փաթեթի շահառուներին տարեկան կանխարգելիչ գնման ծառայություններ

գ/ լարորատոր-ախտորոշիչ հետազոտություններ

դ/գործիքային հետազոտություններ/ սոնոգրաֆիա, ԷԿԳ/

2 Հիվանդանոցային բուժ օգնություն

ա/ մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ շուրջօրյա ռեժիմով

բ/ զինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ շուրջօրյա ռեժիմով

գ/Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ

դ/.Պետական հիմնարկներին և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության սպասարկման ծառայություններ

ե/երեխաների բժշկական օգնության ծառայություններ շուրջօրյա ռեժիմով

Վերոհիշյալ ծառայությունները մատուցվում են Շիրակի մարզի Արթիկ քաղաքի և հարակից 23 գյուղեր ազգաբնակչությանը /48000 բնակիչ/

**ԻՐԱՎԻՃԱԿԱՑԻՆ ՎԵՐՂՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Ընկերությունը իրականացրել է՝

**Ամբուլատոր**

2018թ. 854 հղիի հսկողություն

920 զինեկոլոգիական հիվանդների բուժում ,

2546 էխոսկոպիկ հետազոտություններ

21416 Լարորատոր հետազոտություններ

1254 սոց փաթեթի շահառուների կանխարգելիչ գնում

**Հիվանդանոցային**

2018թ. 538 ծնունդ , որից 93 կեսարյան հատում

2018թ. 180 Գինեկոլոգիական հիվանդանոցների բուժում որից 40 որովայնահատում

2018թ. 112 Հղիության ախտաբանություն

2018թ. 230 մանկական հիվանդանոցների բուժում

Ընկերության հասույթը կազմել է 2018թ. դրությամբ ` 138.513 հազ դրամ , որից 123.764 հազ դրամ պ/պ , 14.749 հազ դրամ վճարովի, սոց փաթեթի շահառուների սպասարկում, վարկային 5222-Ա ծրագրով և ապահովագրական մուտքեր:

Ընկերությունը կրեդիտորական պարտքեր չունի, աշխատել է նախորդ տարի շահույթով , շահույթը կազմել է 2.330 հազ դրամ:

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՐԻՐՆԵՐԸ**

1. Ընկերության մակարդակի իջեցումը II –ից I –ին մակարդակի
2. Հղիների և ծննդաբերությունների թվի պակասելը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով
3. Վիրահատող բժիշկ մանկաբարձ-գինեկոլոգի բացակայությունը
4. Լապարասկոպիկ սարքի բացակայությունը
5. Կանանց կոնսուլտացիայի 2-րդ բժիշկ մանկաբարձ-գինեկոլոգի բացակայությունը
6. Որակավորված Էխոսկոպիստ մանկաբարձ-գինեկոլոգի բացակայությունը
7. Վիրահատարանի աշխատանքի շուրջօրյա ռեժիմի բացակայություն պայմանավորված հերթապահությունների բացակայության հետ
8. Պտղի Դոպլեր հետազոտության բացակայությունը
9. Երիտասարդ մասնագետների բացակայությունը
10. գինեկոլոգիական վիրահատությունների պակասելը
11. ներքին հարդարման վաղեմությունը/ 20 տարի/

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՐԻՐՆԵՐԻ ԼՈՒՄՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Ընկերության խնդիրների լուծման ուղիներն են`

1. Երիտասարդ կադրերի ապահովում, աշխատանքի խրախուսման հստակ մեխանիզմների ներդրմամբ 200.000 դրամ աշխատավարձի ապահովմամբ/երկու մասնագետ/
2. մայրաքաղաքի փորձառու մասնագետների հետ համագործակցության կազմակերպում տեղում
3. Աշխատանքներ կանանց կոնսուլտացիայի բժիշկների և միջին բուժանձնակազմի պատասխանատվության բարձրացման , անհետաձգելի իրավիճակների և բարդությունների կանխարգելման ուղղությամբ, յուրաքանչյուր անհետաձգելի և բարդացած դեպք դարձնել քննարկման առարկա ունենալ անհետաձգելի դեպքերի վերլուծության արձանագրությունների գրանցամատյան
4. Ապահովվել բարձր ոչսկի հղիների և հիվանդանոցի կանխարգելիչ ուղեգրումը II –րդ և III-րդ մակարդակի ծննդատներ

5. Ունենալ արագ արձագանքման և հիվանդի տեղափոխման ներքին կանոնակարգ
6. Ունենալ կանանց կոնսուլտացիայի բժիշկների կողմից վարվող գրանցամատյան բարձր ռիսկի հղիների վիճակի փոփոխության վերաբերյալ , հղիների հաշվառումից դուրս գալու պատճառների վերաբերյալ :
 

Գրանցամատյանում գրառումները անհրաժեշտության դեպքում ապահովվել աշխատանքային ամենօրյա ռեժիմով
7. 30-45 րոպեի ընթացքում վիրահատարանի և ինտենսիվ թերապիայի աշխատանքի կազմակերպման համար ներքին կանոնակարգի մշակում վարձատրման մեխանիզմով աշխատանքային ժամերից դուրս և հանգստյան օրերի համար
8. Հնարավոր նոր տեխնոլոգիաներին ներդնում /լապորասկոպիկ վիրահատություններ/
9. Առողջ ապրելակերպի քարոզչության լայն կիրառում
- 10.Տարածաշրջանի կանանց և դեռահաս աղջիկների առողջության գնահատում իրականացնող ընկերությունների հետ կապի ապահովում
11. անհրաժեշտ լաբորատոր գործիքային հետազոտությունների իրականացում պայմանագրային հիմունքներով հնարավորություն ունեցող լաբորատորիաների հետ
- 12.Աշխատանքներ տանել ծննդատների II –րդ մակարդակը վերադարձնելու ուղղությամբ լրացնելով չափորոշիչներով սահմանված պայմանները
- 13.Աշխատակիցների կրեդիտների ձեռք բերման , ուսուցման և վերապատրաստման ապահովում
- 14.Ներքին հարդարման աշխատանքների էտապային իրականացում
15. Ընկերության տարածքի բարեկարգում կանաչապատում , ծառատնկում
16. Տնտեսապես արդյունավետ կադրային և աշխատանքի վարձատրման քաղաքականության իրականացում/աշխատանքային օրենսդրությամբ և աշխատանքի ազատության իրավունքի սկզբունքների պահպանմամբ , հիմնադրի հետ նախապես համաձայնեցված աշխատանքի վարձատրության վերաբերյալ չափորոշիչներով և իրավական ակտերով սահմանված մեթոդներ / ժամավարձային, գործավարձային, բոնուսային / կիրառմամբ, աշխատողների հետ փոխհամաձայնությամբ մեխանիզմների մշակում
- 17.Կոլեկտիվում բարոյահոգեբանական մթնոլորտում փոխադարձ հարաբերությունների , տրամադրության , տրամադրվածության բարձրացման ապահովում
- 18.Ներդրողների որոնում :Լապարասկոպիկ սարքի ձեռք բերում
  - Վճարովի ծառայությունների տեսակի և քանակի ավելացում
  - Ապահովագրական ընկերությունների հետ կապերի սերտացում մեր ընկերությունը գործընկերների ցանկում ընդգրկելու նպատակով
  - Ընկերության կապիտալի ավելացում հնարավորության սահմաններում
- 14.Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության,վերլուծության իրականացում ամենամսյա և եռամսյակային կտրվածքով
- 15.Տնտեսվարման տարեկան արդյունքում ընկերության շահույթի ապահովում

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Ընկերության ուժեղ կողմեր են համարվում՝

1. Արթիկի տարածաշրջանում միակ լինելը
2. Հարևան մարզում ծննդոգնության ծառայությունների մատուցման թույլ օղակի առկայությունը/ 50-60 հղի հսկվում է և ծննդաբերում է հարևան մարզից/
3. Նորակառույց մի հարկանի կոմպակտ շենքի առկայությունը
4. Նպատակային ծառայությունները մատուցելու համար անհրաժեշտ հիմնական սարքավորումներ առկայությունը

Ընկերության թույլ կողմերից են՝

1. Վիրահատարանի և ինտենսիվ թերապիայի աշխատանքների շուրջօրյա ռեժիմի բացակայությունը
2. նեղ մասնագետների խորհրդատվության ապահովման դժվարությունները
3. երիտասարդ մասնագետ կադրերի բացակայությունը
4. վերարտադրողական կաբինետի բացակայությունը
5. մարզում 5 ծննդոգնության ծառայություն մատուցող ընկերությունների առկայությունը
6. լրացուցիկ վիրահատություններ կատարելու հնարավորության բացակայությունը
7. Շենքի ներքին հարդարման վաղեմությունը կազմում է 20 տարի
8. աշխատավարձի ֆոնդի բարձր տոկոսը 2018թ-ի 84% ընդհանուր եկամուտների հետ համեմատած

2018թ. եկամուտ 136.000 հազ դրամ      աշխատավարձ՝ 116.000 հազ դրամ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ընկերության արտաքին միջավայրում գործունեության վրա ազդող հիմնական երևույթներ կարող են հանդիսանալ

1. Հղիների և ծննդաբերությունների թվի պակասելը/ հատկապես երիտասարդ ընտանիքների ներքի՝ և արտաքին արտագաղթը/
2. Ընդամենը 1 կամ 2 երեխա ունենալու ցանկություն ունեցող ընտանիքների թվաքանակ ավելացումը
3. Առողջ ապրելակերպ ունեցող երիտասարդների թվաքանակի պակասը
4. Հայաստանի Հանրապետության տնտեսությունում և առողջապահության համակարգում ներդրվու

նոր ինստիտուտների ընկալումը, հարմարվելը և իրականացումը ազգաբնակչության առողջապահության աշխատակիցների կողմից

< Արթիկի մոտ և մանկան առողջության պահպանման կենտրոն > ՓԲԸ



*[Handwritten Signature]*  
Ս. Մանուկյան

